Գ. Ֆ. Ջուրսինը[92], այլ նրան լուսավորելու և չար ոգիների մերձենալուց անվըտանգ պահելու համար։ Նա դառնում էր լօ̈իսաճօցի, որը պիտի տեղափոխվեր լօ̈իս աշխարհը[93]:

Հարևան Վարանդայում այդ սովորությունը բացատրվում էր նրանով, որպեսզի հոգու համար երկնքի ճանապարհը լուսավորված լինի։

Մեռած երեխայի ամեն մի ձեռքը դնում էին երեք անգամ վառած հանգցրրած և վերջը դարձյալ վառած մի-մի մոմ, որ մյուս աշխարհում նա վառած մոմով դիմավորի ծնողներին և լույս ճանապարհով նրանց առաջնորդի դեպի արքայություն։ Երեխա ննջեցյալ չունեցողը կարող էր չգտնել արքայության ճանապարհը։

Շաբաթ երեկոները, երբ ննջեցյալների հոգիներն այցելում են ազգականներին, տանը ճրագ էին վառում և չէին թողնում հոգիներին մթության մեջ։

Ննջեցյալին ճանապարհ էին դնում ոչ միայն լօ̈իսավ, այլև կանանց լացուկոծավ: Տղամարդիկ այդ լացուկոծին չէին մասնակցում։ Եթե ազգական կանանց մեջ չկար ողբալու շնորհք ունեցող մեկը, հրավիրում էին գյուղում լավ ողբասացի, լալկանի համբավ ունեցող մի կին։ Նա նստում էր ննջեցյալի սնարքի մոտ, նրա գովքն էր անում երգելով, իսկ շուրջը նստած կանայք կրկնում էին նրա ասած խոսքերը։ Ողբում էին և տանը նաժի և նրա փոխարեն դրած քարի շուրջը նստոտած, ողբում էին և եկեղեցում՝ գանձը կատարելուց հետո, ննջեցյալին դուրս տանելիս, դիակին փաթաթվելով և դուրս տանել արգելելով, ողբում էին և եկեղեցուց տուն վերադառնալուց հետո։ Զանգեզուրումն էլ սովորություն էր, ինչպես և այլ հայաբնակ գավառներում, որ կանայք ննջեցյալին հրաժեշտ էին տալիս եկեղեցում և չէին ուղեկցում մինչև գերեզմանատուն, այլ եկեղեցուց վերադառնում էին տուն[94]։ Ննջեցյալի շորերը հոտոտելով, ողբում էին և թաղման հաջորդ օրը՝ իհնաճօղին, առավոտյան, գերեզմանի հողաթմբին փարվելով, երբ քահանային այգ էին կատարել տալիս։ Ողբում էին կրկին տանը՝ օխտը կատարելուց և եկեղեցում ժամասացությունից վերադառնալուց հետո։ Լացուկոծի ձայնը լցնում էր գյուղը։ Ողբը հասնում էր բարձրագույն էքստազի, մանավանդ վերջին հրաժեշտի րոպեին, եկեղեցուց ննջեցյալին դուրս տանելիս։ Պատահում էր, որ մայրը, քույրը, կինը երեսները պատառոտում էին, մազերը քանդում՝ փետում էին, կրծքին զարնում, գլուխները թակում, ուշագնաց լինում։ Ողբը պակաս թույլ չէր և թարմ գերեզմանաթմբի շուրջը։ Այստեղ ուշագնացի վրա ածում էին գերեզմանի վրայից վերցրած հողից մի բուռ։ Կանանց այս լացուկոծը, այս ողբը գրեթե բոլոր իր մանրամասնություններով հիշեցնում է Փավստոս Բյուզանդի պատմության վառ նկարագրությունը, թե ինչպես էր Փառանձեմը ողբում սպանված Գնելի դիակի վրա։ Դա շատ հին ժամանակներից պահպանվող սովորություն էր, որից չեն կարողանում այսօր էլ ազատագրել շատերին, չնայած այն արմատական հեղաշրջմանը, որը կատարվել է վերջին տասնամյակներում, մանա-

[92] Նշված աշխ. էջ 244։

[93] Համա. Լույս և մութ աշխարքների մասին հայկական հեքիաթները։

[94] Այս արգելքն անհնարին է բացատրել փափկանկատությամբ, որ կանայք ազատ մնան ննջեցյալին գերեզման իջեցնելու ծանր տեսարանին ներկա գտնվելուց, նրանից անջատվելիս մազերը փետելուց, երեսները չանգռոտելուց... Ավելի հավանական է, որ արգելքն առաջ էր գալիս այն երկյուղից՝ չլինի՞ թե ննջեցյալը իր հետ տանի կանանց բեղմնավորվելու ընդունակությունը։